

## Տիգրան Բարխանաջյան. Անցյալ, բայց ոչ կորուսյալ գեղեցկության հետքերով



Գյումրին, բարեբախտաբար, շարունակում է հայ կերպարվեստը հարստացնել նորանոր անուններով ու նոր դեմքերով: Նրանցից մեկն է շնորհաշատ գեղանկարիչ Տիգրան Բարխանաջյանը:

Նախնական կրթությունը տեղի Մերկուրովի անվան նկարչական դպրոցում ստանալուց հետո նա ուսումը շարունակել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան Գեղարվեստի ուսումնարանում, ապա Գեղարվեստի պետական ակադեմիայում: Սկզբից նեթ առկա հակվածությունը դասականի հանդեպ նրա մոտ արտահայտվել է ոչ միայն ակադեմիական նկարելառճով, այլև հստակ թեմատիկ ընտրությամբ: Այսպես, աստվածաշնչյան սյուժեներով նրա երկու ստեղծագործությունները հաջողությամբ ցուցադրվեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսում: Առաջին ստեղծագործության՝ «Քրիստոսը Պիղատոսի առաջ», կոմպոզիցիան կառուցված է այնպես, որ չնայած վերնագրին՝ բացակայում է Քրիստոսի կերպարը: Ակամա այն դառնում է նկարը դիտող յուրաքանչյուր ոք՝ «արժանանալով» պատկերված զառամյալ քահանայապետերի և դպիրների նախատական հայացքներին:

Տիգրան Բարխանաջյանի ներկայացրած երկրորդ նկարը, որ կրում էր «Խորհրդավոր ընթրիք» անունը, աստվածաշնչյան հայտնի սյուժեի նոր և ուշագրավ մեկնաբանություն է: Դարերի ընթացքում այս թեման ձեռք է բերել պատկերագրական որոշակի կանոններ, ուստի առնվազն ստեղծագործական համարձակություն էր պետք ունենալ դրան կրկին անդրադառնալու համար: Այդ կանոններին հիմնականում հետևում է նաև Տիգրանը: Նրա մոտ ևս վերնատանը գտնվող երկարավուն սեղանի շուրջ բոլորած են Հիսուսն ու նրա 12 աշակերտները: Հեղինակը, սակայն, գնացել է ոչ թե առանձին առաքյալների կերպարների անհատականացման, այլ հավատարմության ու մատնության զաղափարների հակադրության ընդգծման ճանապարհով: Ո՛չ լրիվ դեմքով, ո՛չ էլ կիսադեմ չի պատկերված միայն Հուդան՝ որպես մատնության ու մեղքի կրողի: Նա իր մարմնով փակել է լույսի ճանապարհը և ամբողջովին ստվերի մեջ է, չասելու համար՝ հենց Մութն է մարմնավորում: Նրա դեմ-դիմաց, լույսերով ողողուն Քրիստոսն է՝ որպես Լույսի խորհրդանիշ: Ամբողջ կոմպոզիցիան լուծված է հենց լույսի և ստվերի հակադրության միջոցով, որ առավել խորհրդավորությամբ է պարուրում արծարծված թեման:



Վերջինիս մեջ հետևողականորեն խորանալու միտումը Տիգրանին բերեց հանգեցրեց «Խորհրդավոր ընթրիքի» նոր տարբերակին, որն էլ դարձավ նրա դիպլոմային աշխատանքը՝ Գեղարվեստի ակադեմիան ավարտելիս: Նախորդի նման այստեղ ևս բուն ընթրիքի պահը չէ. սեղանի վրա չկան ո՛չ հաց, ո՛չ գինու սկահակներ, ո՛չ էլ այլ պիտույքներ: Պատկերվածն ավելի շատ ընթրիքին հաջորդող տեսարանն է, երբ բոլոր աշակերտներն արտաքուստ

հանգիստ, բայց ներքին լարվածությամբ նստած են սեղանի շուրջ՝ մտորելով, թե իրենցից ո՞վ է մատնիչը: Դիտողի համար, իհարկե, դժվար չէ առանձնացնել Հուդային, որ շփոթահար կեցվածքով և մեկուսի կանգնած միակ ֆիգուրն է նկարում: Այստեղ նկարիչն անհամեմատ մեղմել է լույսի ու ստվերի հակադրությունը և կտավը կառուցել հիմնականում կիսատոնների վրա: Այս նկարն այսօր իր մնայուն տեղն է գտել և ցուցադրվում է Էջմիածնի Վեհարանում:

Տիգրանի ստեղծագործության անբաժան մասն են կազմում նրա նատյուրմորտները: Վերջիններս, բոլորն անխտիր, աչքի են ընկնում նյութականության շեշտվածությամբ և կատարողական գերազանց վարպետությամբ: Դրանք «փոքրիկ հուլանդացիների» նկարելառճը հիշեցնելով հանդերձ՝ շնչում են ընդգծված հայկականությամբ և դասական ազնիվ շնչով: Կատարյալ մշակման է հասցված դրանց յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրը, բոլոր մանրամասներն անխտիր:

Տիգրան Բարխանաջյանը թե՛ ուսումնառության տարիներին և թե՛ հատկապես ակադեմիան ավարտելուց հետո սկսեց վրձնել մի ամբողջական նկարաշար՝ խիստ տարբեր նախընթաց շրջանի ստեղծագործություններից և՛ թեմատիկայով, և՛ կատարման ոճով: Այդ նկարներում ակնհայտ էր հեղինակի ձգտումը դուրս գալու ակադեմիական գեղանկարչության շրջանակներից և գտնելու ինքնադրսևորման նոր ձևեր: Դրանցում առկա է ավելի շատ տրամադրությանն ու զգացմունքներին տրվելու միտումը և ժամանակավոր հրաժեշտը նկարելու նախկին կերպին: Ֆիգուրատիվ այդ կոմպոզիցիաներում նկարիչը կարծես հիմնականում զբաղված է իր երևակայական աշխարհը կերտելով: Ընդ որում՝ ոչ միայն իր պերսոնաժներին է նա տեղավորում այդ աշխարհում, այլև ինքն է կարծես բնակվում այդտեղ: Դատելով պատկերվածների հագուկապից ու նրանց շրջապատող իրերից՝ մենք գործ ունենք 17-18-րդ դարերի եվրոպական միջավայրի հետ:



Ի՞նչ է սա. փախուստ ժամանակակից առօրյայից և գեղեցիկի որոնում անցյալում: Թերևս, այո: Մեր այսօրվա կյանքը, մեզ շրջապատող իրականությունը, մեղմ ասած, բանաստեղծական ազդակներ ու ներշնչումի գեղարվեստական պահեր գրեթե չեն պարզևում նկարչին: Ուստի վերջինս դրանք որոնում է ժամանակային այլ տիրույթում: Դա անցյալ, սակայն ոչ կորուսյալ գեղեցկությունն է, որը հայտնաբերելուց հետո հեղինակը ներկայացնում է մեզ իր վրձնի շռայլ գույներով և վերահաստատում դրա գոյության իրավունքն ու վերադարձի անհրաժեշտությունը:

Հեշտ չէ, իհարկե, նկարչական տարածքները «բնակեցնել» մեծաթիվ պերսոնաժներով, որոնք մերթ զբաղված են թղթախաղով, մերթ երաժշտություն են ունկնդրում, մերթ էլ նվագում են ու պարում: Լսելի չէ, սակայն, որևէ աղմուկ կամ ժխոր: Ներդաշնակություն է տիրում ամենուր, որը, անշուշտ, բխում է արվեստագետի ներաշխարհից: Նա կարծես իր հոգու հանգիստը գտնում է այդ սալոնային գեղեցիկ միջավայրում, որտեղ մարդիկ ապրում ու ստեղծագործում են «գեղեցիկի օրենքներով»:



Տիգրանի կտավները («Դաշնամուրի դաս», «Գեղեցկուհին», «Ֆլեյտայով տղան», «Նվագավարը» և այլն) առանձնանում են գեղագիտական յուրօրինակ մտածողությամբ, գրոտեսկային շեշտվածությամբ և վառ, ժանսեմյան զգայաթրթիռ գույներով: Դրանք, բոլորն անխտիր, սովորական առօրյայի մեջ քնարական-բանաստեղծական ակնթարթներ ու թրթիռներ որոնելու և, ամենակարևորը, գտնելու հաջողված օրինակներ են: Նկարիչը խնդիր չի դնում գաղափարական սևեռման կամ ինչ-որ արտակարգ իրադարձության ցուցադրման: Նա իր հոգու մեղմությունն ու ներքին սերն է փոխանցում իր կտավներին, դրանց հերոսներին, իսկ վերջիններիս միջոցով՝ նաև հանդիսատեսին:

Հաճախակի են այցելում Տիգրան Բարխանաջյանի արվեստանոց՝ տեսնելու համար հատկապես հոգևոր թեմաներով նրա նոր ստեղծագործությունները: Անկարելի է նկարագրել այն զգացողությունը, որ մի օր ունեցա «Տիրամայրը մանկան հետ» կտավը դիտելիս: Աստվածամոր հայացքը քեզ միանգամից պարուրում է երկրային անմիջականությամբ և վերերկրային խորհրդավորությամբ՝ մեկ անգամ ևս խորհել տալով ժամանակավոր-անցողիկ և հավերժ-անանցի հարաբերակցության շուրջ:



Այդ հավերժի երթն ապահովող սերունդների փոխկանչի լավագույն արտահայտություն կարող է հանդիսանալ նկարչի «Մուրբ նահատակներ» մեծադիր



սրբանկարը, որը հանրությանը ներկայացվեց 1915-ի եղեռնի 100-ամյա տարելիցին՝ հայ նահատակների սրբադասման առիթով: Թեմայից բացի թե՛ օվալաձև կոմպոզիցիան և թե՛ գունային զուսպ մակերեսը բյուրավոր նահատակների դեմքերի ընդհանրական բնութագրումների հետ միասին հուզականություն են հաղորդում նկարին: Հեղինակը հասել է թեմատիկ լայն ընդհանրացման՝ վարպետորեն իրար համադրելով անցյալի ողբերգականությունն ու ներկայի դրամատիկ շունչը, ողբերգության ու հրաշափառ հարության խորհուրդը: Այս պատկեր-պատմությունն իր խորհրդաբանությամբ ներկայացնում է մի ամբողջ ժողովրդի հոգու պատմական ընթացքը: Նկարի օրինակներն այսօր իրենց պատվավոր տեղն ունեն աշխարհով մեկ սփռված հայկական եկեղեցիներում: Վերջիններիցս շատերն են զարդարված Տիգրան Բարխանաջյանի նաև այլ սրբանկարներով:

Ստեղծագործական վերելքի ուղին բռնած նկարիչը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Անկասկած է, որ այն արդյունավորվելու է նոր ձեռքբերումներով: Վկան՝ արդեն ստեղծված և ազգային արվեստի մաս կազմող նրա կտավներն են:

Լևոն Լաճիկյան